Ընդունուած է որ 1915-17-ի հայկական ցեղասպանութիւնը եւ Արեւմտահայաստանի բռնագրաւումը Թուրքիոյ կողմէ պարպեցին մեր պապենական հողերը իրենց հայ ազգաբնակչութենէն, իսկ վերապրողները հիմը դրած եղան մեր այսօրուան Սփիւռքին: Սակայն հայկական հողերու ամայացումը իր հայ տարրէն բերած է շատ հիմնական փոփոխութիւններ մեր դարաւոր մշակոյթէն ներս եւ ունեցած է ճակատագրական անդրադարձներ մեր իրականութեան վրայ ու կերպարանափոխած հայու նկարագիրը: Այդ հիմնական փոփոխութիւններէն մին հայ գիւղացիութեան բնաջնջումն է, ինչպէս նաեւ հինական կեանքի վերացումը Թրքահայաստանի հայկական գաւառներէն՝ Վանէն մինչեւ Մարզվան, Ակնէն մինչեւ Ուրֆա: Արդարեւ, հողը եւ գիւղացին մեր հոգին էին, ժողովուրդին աւիշը եւ ժողովրդական ստեղծագործութեան աւիւնը: Այսպէս, գիւղացիութեան հետ կոսնցուցինք մեր նահապետական կեանքը, բայց մանաւանդ արօրին ու գութանին անհետացումով չորցան գեղջուկ ստեղծագործութեան բանահիւսութեան աղբիւրը, մեր հարուստ ու բազմազան գաւառաբարբառները եւ, ի մասնաւորի, ազգագրական երգերն ու խաղերը: Այլեւս «Սասունցի Դաւիթ» եւ «Մհրանի ծառ» չեն ստեղծագործուիր Սասունի եւ Վանի մէջ, որոնք դեռ երէկ հայ հանճարի բնօրրաններն էին, իսկ այսօր, կիսաքանդ, քիւրտ ցեղախումբերու ասպատակութիւններուն ենթակայ, չեն յիշուիր իբրեւ հայկական քաղաքներ...

Այս եղերական իրականութիւնները չէին վրիպած մեր ուշադրութենէն, սակայն ի՛նչ կարելի էր ընել մեր ներկայ վիճակը նկատի ունենալով - անվերջ ժողովներու եւ քաշկռտուքներու կարիքը չկար, պէտք էր փրկել անմիջապէս այն քիչը եւ վաւերականը որ տակաւին կը յամենար մեր վերապրող սերունդին վերջին ներկայացուցիչներու յիշողութեան մէջ. անհրաժեշտ էր անյապաղ պեղել անոնց ողջ յիշատակարանը համբերութեամբ եւ հմտութեամբ՝ կեանքի կոչելով հոն թաղուած յուշերը՝ որքան որ անոնք կիսատ ըլլային կամ կցկտուր, որքան որ ալ գործածուած լեզուն յղկուած չըլլար, նոյնիսկ եթէ հարցազրոյցներէն ոմանք պէտք ըլլար թրքերէնով յառաջ տանիլ:

Ահա այն ամբողջ աշխատանքը որուն ձեռնարկեցինք, իբրեւ կեանքի առաքելութիւն, 1985-ին, եղեռնի 70-ամեակի առիթով:

Այսօր, 1989-ին, կը թեւակոխենք այս սրբազան արշաւին հինգերորդ տարին: Յարդ շրջած ենք, մօտ 22 ամիսներ, Ֆրանսայի հայահոծ շրջանները սկսելով հայկական երեք ծերանոցներէն շնորհիւ Փարիզի Աղքատախնամի ընծայած դիւրութիւններուն, անցած ենք Ա.Մ.Ն. ու չորս հայաշատ կեդրոններէ շնորհիւ Պոստոնի Զօրեան հիմնարկի անվերապահ քաջալերանքին, մաղէ անցուցած ենք Պէլճիքա հաստատուած առաջին հայերը եւ վերջին եկուորները՝ Թրքա-քրտահայերը, պատմական Տարօնի հարաւային երկու-երեք գիւղերու հայ բայց քրտախօս բնակչութիւնը, որոնք վերջին տասը տարիներու ընթացքին հաստատուեցան Պրիւքսէլ ու Հոլանտայի Ալմէլօ քաղաքները, նաեւ Միւնիխ եւ Մարսիլիա: Մեր վերջին արշաւը տեղի ունեցաւ անցեալ Հոկտեմբերին Յունաստանի հայութեան մօտ, Աթէնք եւ Սալոնիկ, շնորհիւ Աթէնքի հայ Դատի Յանձնախումբի անշահախնդիր աջակցութեան եւ անթերի կազմակերպութեան:

Այս զանազան արշաւներուն մեր կատարած հարցազրոյցներուն ընթացքին ոչ միայն հետամուտ եղած ենք վերոյիշեալ երգա-ազգագրական բանահիւսական պատառիկներու եւ գաւառաբարբառներու մէկտեղումին, այլ խնդրած ենք մեր 80-ի մօտ եւ 80-է վեր ծերունիներէն եւ մամիկներէն որ կարելի եղած հարազատութեամբ վերյիշեն եւ վերամտաբերեն իրենց գիւղի, աւանի կամ քաղաքի հայկական կեանքը իր բոլոր երեսներով: Եւ մանաւանդ պնդած ենք որ անոնք մեր Ձայնագրիչ գործիքին յանձնեն 1915-ի իրենց ականատեսի յիշատակները, նաեւ իսկական պատմութիւնը եւ պատճառները իրենց վերապրումին: Բարոյական պարտականութեան տակ դնելով մեր աննման երէցները, խնդրած ենք որ չանտեսեն յետին մանրամասնութիւնները երբ կը պատմեն Ջարդերու մասին՝ երբ իրենք եղած են ականատես. Ձայնագրիչս հարուստ է լացերով, հառաչներով, կակազումներով, անէծքներով, ողբերով եւ հեկեկանքներով...

Այս երգա-վկայաքաղի ժապաւէններս եւ հոն ամփոփուած անփոխարինելի գանձերը չվրիպեցան Մայր Հայրենիքի ուշադրութենէն: Երկու անգամ Երեւան մեկնեցայ պաշտօնական հրաւէրով. Երեւանի «Ավանկարդ» եւ «Հայրենիքի Ձայն» լրագիրները յատուկ ուշադրութեամբ անդրադարձան գործին կարեւորութեան եւ աշխատանքին լրջութեան:

(Շար. տե՛ս էջ 9)

BULLETIN D'ADHESION 1989

à l'ACAM, Association Culturelle Arménienne de Marne-la-Vallée
1, avenue Houette, 93160 NOISY LE GRAND

Je soussigné (e)

Nom de l'adhérent _____
Prénoms _____
Date et lieu de naissance _____
Adresse _____
_____
Code postal _____
Localité _____

Autres adhérents Prénoms, date et lieu de naissance de chacun
Conjoint _____
1er enfant _____
2ème enfant _____
3ème enfant _____
4ème enfant _____

adhère à l'ACAM et déclare me conformer à ses statuts.

Je joins le montant de la cotisation :

1ère personne.....50,00 F
Autres personnes.....x 25,00 F : F
Total : F

que je règle par chèque bancaire/postal (rayer la mention inutile) à l'ordre de l'ACAM.

Fait à ....., le .....
Signature :

Les informations demandées ci-dessus, à l'usage exclusif de l'ACAM, nous sont nécessaires pour prendre utilement en compte votre demande d'adhésion. Conformément à la loi du 6 janvier 1978 «Informatique et Libertés», vous êtes habilité à obtenir communication des informations nominatives recueillies et, le cas échéant, à nous en demander toute rectification.

1

VOUS N'ETES PAS ENCORE ADHERENT DE L'ACAM ?

Remplissez le bulletin d'adhésion ci-contre.
Joignez-y votre règlement par chèque bancaire ou postal, à l'ordre de l'ACAM.

VOUS RENOUVELEZ VOTRE ADHESION A L'ACAM ?

Indiquez «Renouvellement» sur le bulletin d'adhésion ci-contre.
Joignez-y votre règlement par chèque bancaire ou postal, à l'ordre de l'ACAM.

2

Postez l'ensemble dès aujourd'hui dans une enveloppe affranchie au tarif LETTRE et adressée à :

ACAM
1, avenue Houette
93160 NOISY LE GRAND

ou mieux, venez à notre stand à la

Fête des Bords de Marne de Noisy-le-Grand
les 10 et 11 juin 1989
l'après-midi de 14 heures à 19 heures

Les langues c'est simple comme "bonjour"
avec la collection "Bonjour salut" de la Bibliothèque Publique d'Information

Parèv ...
pour apprendre l'arménien



Un nouveau titre de la collection "Bonjour salut" : "Parèv" / H. Kurkjian

méthode d'auto-apprentissage
d'arménien occidental moderne
(2e édition de l'arménien sans maître)
1 manuel bilingue + 10 cassettes
56 leçons, des textes littéraires,
un lexique, un index grammatical et
8 heures d'enregistrement
(dialogues et exercices)

Titres parus :
"Vanakkam" (tamoul) éd. BPI (86)
"Ya sou" (grec) éd. BPI / INALCO (86)



Laboratoire de Langues de la Bibliothèque Publique d'Information, tél (1) 42 77 12 33 p. 44 45

ARMENIEN

Pour commander **"Parèv"**, méthode d'auto-enseignement d'arménien,
retourner ce coupon-réponse à:
ACAM 1,avenue Houette 93160 NOISY-LE-GRAND

Nom ____________ Prénom ____________

Adresse ____________

Code postal ____________ Ville ____________ Pays ____________

désire recevoir .... exemplaires de *Parèv* au prix unitaire de 552 F

(20 % de réduction sur le prix tarif).

Ci-joint réglement par chèque libellé à l'ordre de l'ACAM.

ՉԱՓԱԶԱՆՑ ԿԵՆՍԱԿԱՆ...

(Շար. 8րդ Էջէն)

Այսօր կը շարունակեմ հետազօտութիւնս աւելի քան նօսրացած մեր հին սերունդի վերջնագոյն ներկայացուցիչներուն մօտ: Արդ, քանի մը տարիէն, նախկին պատմահայաստանի վերջին վերապրողներու անհետացումէն ետք, մենք պիտի մնանք որբ, իսկապէս որբ, գաղթաշխարհի տապածքին ծփացող որպէս մէկ հարօրինակ եւ հետաքրքրական ոդրամասնութիւն մը՝ մինչեւ վերջին կայանը...

Տակաւին չա՞տ բան կայ հաւաքելիք, իսկ մենք բոլորովին առանձինն այս գործը առաջ կը տանինք՝ խրախուսուած գիտակից եւ ազգանուէր հայրենակիցներու եւ հաստատութիւններու քաջալերանքներէն: Հոս կարեւոր է որ չեշտենք հինէն մեզի հասած որեւէ առարկայի արժէքը - հին թերթեր, հին նկարներ, հինէն մնացած որբանոցի անձնաթուղթեր, հին անցագիրներ, հին 78 պտոյտ երգապնակներ, մանաւանդ հին հայատառ երգարաններ՝ ձեռագիր կամ տպագիր: Այս բոլորը եւ նմանօրինակ իրեր ու առարկաներ թող չնետուին ըսելով որ «հնչի՛ է պէտք այլեւս»: Նուիրեցէք այդ իրերը հայկական հաստատութիւններու (CRDA, CDCA, հայկական թանգարաններուն...) եթէ չէք փափաքիր ժառանգ ձգել ձեզմէ վերջ եկողներուն: Մենք կը հաւաքենք այդ բոլորը իբրեւ անբաժան մէկ մասնիկը մեր կատարած ձայնագրութիւններուն: Պիտի այցելենք տակաւին, հնարաւորութեան սահմաններուն մէջ, այն հայ ընտանիքները ուրկէ ներս մամիկ մը կայ կամ պապիկ մը եւ կամ երկրորդ սերունդի ներկայացուցիչ մը որ եղած է հետամուտ եւ սրված իր երեցներէն թանկագին հին երգեր որոնք այլեւս չեն երգուիր, նաեւ հէքեաթներ, առածներ կամ բարբառային մնացորդներ...

Յուսալով որ մեր այս հաղորդագրութիւնը մտածել կուտայ ուշադիր ընթերցողին եւ պատրաստակամութեան մղէ զինք, կը խնդրենք որ երիտասարդ ընթերցողները հաղորդեն այս մասին իրենց մեծերուն որպէսզի մեր հաւանական այցելութիւնը անոնց անակնկալի չբերէ եւ, մինչ այդ, մտաբերեն իրենց հին յիշատակները: Տակաւին կարելի է յուսալ որ եթէ ընտանիքէ մը ներս մեր այցելութեան հնարաւորութիւնը չստեղծուի, այդ երիզագրումը կատարուի մեր բացակայութեան, վերը յիշուած ցուցմունքներուն եւ սկզբունքներուն հիման վրայ եւ անկէ օրինակ մը ղրկուի մեր հասցէին: Որքա՛ն օգտաշատ եւ ազգանուէր գործ մը կատարուած պիտի ըլլայ:

Պետրոս ԱԼԱՀԱՅՏՈՑԵԱՆ

Հասցէ:
Bedros ALAHAIDOYAN
Radio-TV Belge, RTBF
Bibliothèque musicale
18, place E. Flagey
B-1050 BRUXELLES
BELGIQUE.

Téléphone, en Belgique :
(19 - 322) 657.99.32

Vous pouvez également contacter à Noisy-le-Grand :
Philippe PILIBOSSIAN
(1) 43.04.69.25

ԵՐԱԶ

Ես լսեցի մի անոյշ ձայն, -
Իմ ծերացած մօր մօտ էր,
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսո՛ս որ երազ էր:
Կարկաչահոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երա՛զ էր ցնորամիտ:
Եւ մեղեդին տխուր, մայրենի
Ցիշեց մանկութեան օրեր.
Մօրըս համբոյրն ես զգացի.
Ա՜խ, ափսո՛ս որ երազ էր:
Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց - շատ թաց էր, -
Բայց արտասուքս գնում էին...
Ա՜խ, այդ ինչո՛ւ երազ էր:

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ

— — — —

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ *(1840 Աշտարակ - 1907 Մոսկուա) - Հայ բանաստեղծ, մանկավարժ, հրապարակագիր:*

Աշակերտ Մոսկուայի Լազարեան ճեմարանին, ուր պաշտօնավարած է նախ որպէս նախակրթարանի ուսուցիչ եւ վերակացու, ապա որպէս բարձր դասարաններու հայերէնի ուսուցիչ, աշխատակցելով մէկտեղ ճռաքաղ եւ հիւսիսափայլ ամսագիրներուն, առանձին հրատարակած է Ազատութեան ժամեր գրաբար եւ աշխարհաբար առաջին հաւաքածոն, ուր ամփոփուած են սիրոյ, հայրենասիրութեան նուիրուած իր առաջին երգերը:

Լեւոնի Վիշտը Ս. Շ.-ի ընթրուածներուն երկրորդ հատորն է, ուր կը գտնենք համանուն բանաստեղծութեան հետ արձագանքը օրուան հասարակական գաղափարներուն:

Ս. Շ., որպէս մանկավարժ, բանաստեղծ ու հրապարակագիր, կարեւոր դեր կատարած է հայ գրականութեան ու հասարակական մտքի զարգացման պատմութեան մէջ:

Վերի երազը, որ հայ քնարերգութեան գոհարներէն մին է, երգի վերածուած է:

Լ. Խ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՑ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԴՐՈՒԹԻՒՆ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ « ՄԱՔԻՆԹՈՇ » ՄԱՆՐԱԿԱՐԳԻՉԻՆ ՄԻՋՈՑԱՒ

Արդիական գիտելիք.

*Դ**արուս** ութսունական թուականներուն ամենէն աչքառու երեւոյթը՝ մանրակարգիչներու ներմուծումն է մարդկային գործունէութեան գրեթէ բոլոր մարզերուն մէջ: Այս նորահրաշ սարքաւորումներու երկնակամարին վրայ փայլող ամենէն պայծառ աստղը՝ MACINTOSH մակնիշը կը կրէ: Ամերիկեան APPLE Ընկ. արտադրած ու մեր կողմէն « հայացուած » սոյն գերազանց մեքենան կարելի է որեւէ երկրի մէջ գտնել յարաբերաբար աժան գնով, եւ օգտուիլ իր անհամար հնարաւորութիւններէն: Ան մասնաւորաբար օգտակար է հայ ազգի մշակոյթի տարածման ու զարգացման, քանի որ ոչ մէկ մանրակարգիչ կրնայ մրցիլ անոր մատուցած բարձրորակ ու բազմալեզու ցուցադրութեան եւ տպագրութեան հետ: Ահա թէ ինչո՛ւ սփիւռքի թէ Հայրենիքի մէջ ան սկսած է ընդհանրանալ ամէն կարգի հաստատութիւններէ ներս, եւ անհատներն անգամ անոր կը դիմեն՝ իրենց առօրեայ զանազան գործառնութիւնները դիւրացնելու համար:*

*Գ **սերունդի** պատկող Մաքինթոշին ընծայած բազմապիսի ծառայութիւններէն ամենէն շատ օգտուողները՝ փաստագրութեան կեդրոններն են: Արդարեւ անոր միջոցաւ կարելի է ամբարել ոչ միայն գրաւոր տեղեկութիւններ, այլ նաեւ ամէն տեսակ նկարներ, հարցագրոյցներ, եղանակներ եւ ձայնագրուած կամ լուսագրուած երիզներ: Իսկ զանոնք օգտագործելու համար հարկաւոր չէ տեղւոյն վրայ գտնուիլ: Հեռախօսային համատարած ցանցին շնորհիւ, Աւստրալիա բնակող անձ մը վայրկենապէս իր մանրակարգիչին միջոցաւ կրնայ « թերթատել » երկրիս միւս կողմը - զոր օրինակ՝ Հիւսիսային Ամերիկա կամ Եւրոպա - գտնուող կեդրոնի մը վաւերաթուղթերը, դիտել հին թէ նոր պատկերները, լսել Մեծ Եղեռնէն մազապուրծ ազատած ծերունիի մը ոդիսականը՝ միաժամանակ տեսնելով անոր դէմքին արտայայտութիւնները: Եւ բնականաբար՝ այս բոլորը կրնայ անմիջապէս ընդօրինակել իր քովը, ապագային զանոնք աւելի մօտէն ուսումնասիրելու համար: Այսինքն, այն ինչ որ տակաւին հազիւ մի քանի տարի առաջ երկար ամիսներու կը կարօտէր դժուարին ու յոգնեցուցիչ պայմաններու տակ իրագործուելու համար, այժմ մէկ-երկու վայրկեանի մէջ կրնայ տեղի ունենալ, առանց բազկաթոռէն հեռանալու:*

*Փ**աստագրութեան** հայկական կեդրոններուն համար ուրիշ անգնահատելի ծառայութիւն մը կը մատուցանէ Մաքինթոշ մանրակարգիչը - վաւերաթուղթերու բազմալեզու արձանագրութիւնն ու դասաւորումը: Այս գործողութիւնը կը կատարուի տոմսասարքումի յատագրի մը միջոցաւ: Որեւէ հաստատութիւն որ իր մօտ ունի լատինատառ, ռուսերէն կամ յունարէն գրութիւններ՝ հայերէններէն զատ: Առանց ժամանակի կորուստի անոնց մասին տեղեկութիւններ քաղելու համար՝ անոնցմէ ամէն մէկուն յատուկ տոմսեր կազմուելու են: Երբ այս նախապատրաստական աշխատանքը իրագործուի, մանրակարգիչը ամէն մէկ լեզուով այբուբենական դասաւորումներ եւ ինքնաշխատ փնտռտուքներ կը կատարէ, ու զանազան տուեալներ պարունակող ցանկեր կը տպէ: Այս կերպով հետազօտութիւնները չափազանց կը դիւրանան:*

*Բ**նականաբար**՝ Գ. սերունդի մանրակարգիչը ամէնուրեք կը գործածուի որպէս բազմալեզու գերարդիական տողաշար մեքենայ, ինչպէս նաեւ նկարիչի պաստառ կամ երաժիշտի նուագարան: Բոլոր արտադրութեանց գունաւոր տպագրութիւնը կ՛ապահովէ ան, եւ իր մէջ կը պարունակէ զանազան չափերով հարիւրաւոր տառատեսակներ՝ վերոյիշեալ այբուբեններուն յատուկ: Ինչ որ ժամանակին չորս գրամեքենաներու գործածութեամբ կրնար ձեռք ձգուիլ, այսօր անհամեմատօրէն աւելի արագ ու ճոխ եւ անթերի կերպով կը տպուի, որովհետեւ վրիպակներու սրբագրութիւնը վայրկենական է: Իսկ փոփոխութիւններու ներմուծումը շատ հեշտ է. ուստի մանրակարգիչին պարունակած տուեալները միշտ թարմ եւ այժմէական կը մնան:*

*Հ**ետեւաբար**՝ ամէն տեսակի վաւերաթուղթեր, փաստագրութիւններ ու լսատեսողական արձանագրութիւններ հաւաքելու, դասաւորելու եւ փոխանակելու լաւագոյն Մաքինթոշ մանրակարգիչին ընդհանուր կիրարկումն է: Երեւանի եւ Փարիզի Մատենադարանները արդէն անով օժտուած են, Վիեննայի ու Վենետիկի Մխիթարեան գրադարաններն ալ մօտ օրէն զայն պիտի ստանան: Իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Դիւանատունը, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին եւ Լոս Անճելըսի Առաջնորդարաններուն նման՝ անոր պիտի դիմէ իր բոլոր տոմարներուն օգտագործման եւ ամէն տեսակ տպագրութեանց համար: Ուրեմն փափաքելի է որ հայկական բոլոր փաստագրութեան կեդրոններն ալ սոյն մեծահռչակ հաստատութեանց օրինակին հետեւին, որպէսզի կարենան հեշտօրէն օգտուիլ անոնց պարունակած անգնահատելի վաւերագրական հարստութիւններէն:*

Արի ԹՕՓՈՒԶԽԱՆԵԱՆ
Խմբագիր Բանբեր ամսաթերթի

Ari Topouzkhanian, 13, rue des Alliés,
69100 Villeurbanne, France (Tél.: 16 - 78.89.21.44)

LE CENTRE GEORGES POMPIDOU REEDITE LA METHODE D'APPRENTISSAGE DE L'ARMENIEN DE H. KURKJIAN

Une importante contribution à la diffusion de la langue et de la culture arméniennes.

Nous sommes heureux d'annoncer que cette méthode d'autoapprentissage de la langue arménienne, réalisée par Haroutioun KURKJIAN en 1969, qui reste jusqu'à maintenant la seule méthode de ce type destinée aux francophones, et qui était épuisée depuis longtemps, vient d'être rééditée par la Bibliothèque Publique d'Information (BPI) du Centre Georges Pompidou, sous la forme d'un manuel bilingue et de deux coffrets de cinq cassettes.

Nous avons demandé à Madame Jacqueline EKIZIAN, responsable à la BPI et à la Médiathèque, de nous présenter brièvement le Laboratoire de langues de la BPI.

Par ailleurs, Madame Annie PILIBOSSIAN, linguiste et spécialiste des méthodes audiovisuelles, fait une présentation critique de la méthode de H. KURKJIAN.

Enfin, nous donnons la liste des manuels d'arménien disponibles à la Librairie Samuélian, rue Monsieur le Prince, ou à la Maison de la Culture d'Alfortville.

Des langues vivantes en liberté.

La BPI du centre Georges Pompidou propose à ses usagers un espace consacré à plus de cent-dix langues et dialectes du monde entier. Accessible à tous, sans formalité et gratuitement, comme la bibliothèque qui l'abrite, cet espace de langues résolument multimédia permet de s'initier, se perfectionner dans la pratique des langes étrangères et régionales.

Outre sa gratuité, son originalité tient à la diversité des langues proposées, à la variété des documents offerts et à son option délibérée d'autoformation.

Pas d'enseignement en effet à la BPI, mais un choix d'outils, de matériels, de documents, permettant à chaque utilisateur de prendre en charge son propre apprentissage de la manière la plus adaptée à ses besoins, à ses objectifs, à ses contraintes.

Au sein d'une bibliothèque encyclopédique, multimédia, multilingue et en libre accès, le laboratoire propose :

- un accueil spécialisé ;
- une zone de travail individuel de plus de soixante places ;
- des «écrans sans frontières», réception des télévisions étrangères par câble et par satellites ;
- un lieu idéal pour stimuler la curiosité pour les langues et les cultures différentes, régionales ou étrangères.

Des manuels au cinéma.

Dans la perspective de l'autoformation, la variété des sources d'information est indispensable et pour chaque langue des documents de nature différente seront proposés :

- des méthodes (documents pédagogiques d'apprentissage de tous niveaux) obligatoirement accompagnés d'enregistrements sonores et/ou visuels ;
- des documents sonores : chansons, théâtre, émissions de radio... ;
- des films en version originale non sous-titrés ;
- des usuels ;
- pour quelques langues l'accès en direct aux télévisions étrangères.

Cette variété permet à chacun de se construire un programme selon ses besoins mais aussi selon ses envies. En évitant l'ennui la motivation, si importante dans l'acquisition des langues étrangères, est entretenue voire réactivée au plus grand bénéfice de l'efficacité.

La collection *Bonjour, Salut.*

Un de ses principaux objectifs, «Diffusion des langues et des cultures», a conduit le laboratoire de langues de la BPI à devenir l'éditeur d'une collection de produits pédagogiques d'autoformation, pour des langues non ou peu représentées dans l'édition.. Les langues déjà parues sont le tamoul, le grec, le peul, le malgache et récemment l'arménien.

PAREV, initiation à l'arménien occidental moderne. Nouvelle édition de *L'arménien sans maître*/H. KURKJIAN. - Paris, BPI, 1989.

Jacqueline EKIZIAN
Responsable à la BPI du service Documents sonores et Langues.

On peut trouver à la BPI pour l'apprentissage de l'arménien :

Méthodes sonores :

- *Parèv*/ H. KURKJIAN. - BPI, 1989
- *Spoken East armenian*/ Gordon H. FAIRBANK and Earl W. STEVICK. - Spoken Language Services, USA
- *Practical textbook of western armenian*/ H. KURKJIAN. English adaptation : Virginia PATTIE. - Armenian Diaspora Series, 1980.

Manuels :

- *Manuel de langue arménienne*/ F. FEYDIT. - Klincksieck, 1969
- *Mon premier livre d'arménien*/ M. MINASSIAN. - Genève
- *Méthode globale d'arménien* [RSS d'Arménie].

Documents sonores :

- chants
- poésies
- enregistrements de la radiotélévision d'Erevan.

Films en version originale :

- *Portraits d'Arméniens* (Association Audiovisuelle Arménienne).

Manuels pour francophones

- FEYDIT Frédéric, *Manuel de langue arménienne (arménien occidental moderne)*, 2ème édition revue et augmentée, Editions Klincksieck, Paris, 1969, 135 francs.
- MINASSIAN Martiros, *Manuel pratique d'arménien occidental*, édité par l'auteur, Genève, 1981, 90 francs (épuisé à la Librairie Samuélian).
- MINASSIAN Martiros, *Mon premier livre d'arménien*, publication de la Fondation des Frères Ghoukassiantz, Genève, 1981, 70 francs.
- BENNEIAN, *Cours phonique d'arménien, abécédaire, Editions Harben Hrad, Rillieux.*

Il existe des cours édités au Liban et aux USA mais qui ne sont pas en vente en région parisienne. Mme Hilda Kalfayan-Panossian est auteur d'une méthode audiovisuelle, encore non publiée, d'apprentissage de l'arménien-langue étrangère.

ANALYSE DE LA METHODE DE H. KURKJIAN

L'analyse d'une linguiste, spécialiste des méthodes audiovisuelles.

Les Editions du Centre Georges Pompidou viennent de publier la deuxième édition de Parèv, méthode d'autoapprentissage de l'arménien moderne occidental, *par Haroutioun KURKJIAN. Le manuel est complété par deux coffrets de cinq cassettes chacun, reproduisant l'intégralité des dialogues et presque tous les exercices corrigés.*

Les membres de l'A.C.A.M. ont été informés de la parution de cette édition ; nous vous proposons ici une analyse de cette méthode.

M. KURKJIAN, ancien professeur d'arménien et de français à Beyrouth, et travaillant actuellement pour des journaux arméniens à Athènes, propose aux Arméniens francophones une méthode qui n'est pas nouvelle en tant que telle, mais nouvelle pour ce qui concerne son application à l'apprentissage de l'arménien.

La première édition intitulée *Manuel pratique de la langue arménienne*, parue en 1970 aux éditions de l'Association Culturelle Arménienne Hamaskaïne de Beyrouth, était publiée par l'Union des Etudiants Arméniens d'Europe. A l'époque de la première publication, les membres de l'Union, en commun accord avec l'auteur, s'étaient basés sur le fait que les manuels d'arménien publiés en France «ne sont pas d'une assimilation aisée et, partant, pas propres à un usage individuel». Par conséquent, le manuel de H. KURKJIAN «doit offrir dans un minimum de temps et moyennant le minimum d'efforts individuels un maximum de compréhension et de pratique, de connaissance vivante de la langue arménienne».

Pour aboutir à ce résultat ambitieux, la méthode *Parèv* reprend les principaux éléments du *Manuel pratique*. Bien que dix-huit années séparent la première édition de la deuxième, toutes deux restent des méthodes d'autoenseignement d'une part, des méthodes progressives d'autre part, car les leçons sont graduées par difficultés, afin d'être assimilées progressivement.

Viennent à l'appui les dix cassettes avec les enregistrements des dialogues et des exercices à la fin de chaque leçon, ce qui permet à l'élève de répéter et de lire à haute voix, tout en imitant «le prof».

Le manuel contient cinquante-six leçons, réparties en deux livrets. Les seize premières leçons du premier livret apprennent progressivement l'alphabet arménien dans son intégralité, avec beaucoup d'exercices de prononciation, c'est-à-dire de pratique orale, ainsi qu'un vocabulaire élémentaire et des règles de grammaire simples. Trois leçons de révision complètent et enrichissent les connaissances à l'aide d'exercices de traduction (thèmes et versions). Le second livret, beaucoup plus volumineux, comprend les leçons dix-sept à cinquante-six, où sont concentrés les mots d'un vocabulaire de base de la langue arménienne (mille à mille cent mots).

Il est à noter que les quelque quinze nouveaux mots en moyenne de chaque leçon sont introduits afin d'être appris dans le sens global du texte proposé, et non pas appris par cœur séparément. Cette démarche permet théoriquement à l'élève de mémoriser plus facilement les mots et de les utiliser plus facilement, à condition que les exercices qui suivent les textes reprennent suffisamment souvent les mêmes mots dans des contextes semblables.

Les formes grammaticales présentées dans la rubrique «Notice grammaticale» sont elles aussi simplifiées au maximum, car là encore l'auteur vise la compréhension globale du texte par assimilation des structures de la langue arménienne. Les cinq leçons de révision reprennent les mêmes règles en essayant de les développer sans trop les enrichir.

Une troisième partie est constituée d'une série de textes littéraires, destinée à la lecture et la compréhension des œuvres d'écrivains arméniens (voir note en fin d'article). Ces textes, tout en restant facultatifs, ajoutent cinq cents à six cents mots au vocabulaire de base repris à la fin du manuel, dans l'ordre alphabétique avec leur traduction en français, ainsi que les déclinaisons et les conjugaisons irrégulières.

A la fin des textes, les nouveaux mots sont numérotés et traduits dans la rubrique «Vocabulaire», mais traduits encore une fois dans le sens global du texte.

Comme cette méthode est destinée surtout à un apprentissage oral, il est important de ne pas sauter l'exercice fondamental de pratique après chaque leçon, ainsi que d'écouter attentivement les voix des cassettes, d'essayer d'imiter leur prononciation.

Cette méthode reste ouverte à tous ceux qui voudraient approfondir leur connaissance de l'arménien, car elle se prête à un apprentissage avec présence d'un maître, à écrire tous les textes littéraires, se servir d'un véritable dictionnaire français-arménien.

Pourtant..., l'apprentissage de la langue arménienne par cette méthode suppose une très bonne connaissance de la langue française sur laquelle s'appuie le manuel. Tout texte étant traduit en français, chaque exercice étant expliqué en français, il faut dire que l'élève ne pourra jamais libérer sa mémoire de la traduction instantanée de chaque mot, chaque phrase, parce qu'il les a mémorisés en couple. Il ne pourra jamais penser en arménien, et donc il ne pourra jamais construire une phrase de difficulté moyenne en arménien, sans que cette phrase porte les stigmates de la tournure française. La langue arménienne par cette méthode restera donc pour un arménien vivant en France une langue étrangère. Les spécialistes d'apprentissage des langues disent que «Si au bout de deux ans, tu n'as pas appris à penser dans la langue que tu apprends, tu n'as rien appris».

On pourrait comparer les résultats de cette méthode avec les résultats d'autres méthodes, comme par exemple celle de Martiros MINASSIAN et celle de Madame PANOSSIAN, car notre communauté a un besoin urgent et très important de combler la lacune grandissante que présente la nouvelle génération par sa tendance à l'oubli de ses origines.

Annie PILIBOSSIAN.

Note : Les textes présentés sont en réalité une adaptation pour l'usage en arménien occidental moderne de textes originaux en arménien oriental ou en arménien occidental ; en matière de textes littéraires, il est regrettable que cette adaptation ne soit pas même signalée.

A. P.

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ 1861 - 1870

Այս տասնամեակին ընթացքին զարթօնքի շրջան մը կը բոլորէ Հայութիւնը, որուն ամենացայտուն երեւոյթները կը կազմեն Ազգային Սահմանադրութեան ու Մկրտիչ Խրիմեան Հայրենասէր վարդապետին երեւումը երկրին ազգային, մշակութային ու քաղաքական բեմին վրայ:

Դարերէ ի վեր անկախութիւնը կորսնցուցած Հայութիւնը զուտ կրօնական համայնք մը կը սեպուի իր հայրենիքին մէջ որուն, կղերին ու ամիրաներու մականին տակ, թոյլ կը տրուի նիւթական թշուառութեան մէջ հազիւ ֆիզիքական կեանքի մը գոյութիւնը ապահովել եւ կամ կրօնափոխութեան կամ գաղթի դիմել այս դժբաղդ կացութենէն փրկուելու համար:

Բուն Հայաստանէն դուրս ցրուած, « Ասիոյ այրերը մայրենի լեզուի կրթութենէն զրկեալ են ստ մեծի մասին իրենց բնակակից ազգաց լեզուն փոխ առնելով, նոյնպէս նոցա սովորութիւնները, երգերը, պատմութիւնները, առածները եւ ապա բնաւորութիւններն անգամ », կը գրէ Վարդ Կեսարիոյ խմբագիրը 1863-ին:

Դարու սկզբին վանքերու, եկեղեցիներու կողքին մշակոյթի պահպանումն ու զարգացումը տեղի կ'ունենան նախնական ու աղքատիկ միջոցներով:

Կացութիւնը հետզհետէ կը բարեփոխուի, ու 1848-ի ֆրանսական յեղափոխութեան կայծերը մեր կողմերը կը հասնին արտասահմանէն վերադարձող երիտասարդ ուժերու միջոցաւ. ասոնք, միջին դասակարգին պատկանող արհեստակցական միութիւններուն հետ Ազգային Սահմանադրութեամբ կը ջանան կարգի ու կանոնի բերել հայկական կեանքը Կ. Պոլիս թէ գաւառները:

Ինքնակալ, բացարձակ իշխանութեան մը հովանիին տակ, այս Սահմանադրութիւնը աննախընթաց երեւոյթ մըն է, որ « պարտի ազգային ոգին զարգացնել »:

« Ասկէ առաջ, կ'ըսէ Գր. Օտեան, ազգը վարչութեան պէս բան մը ունէր, լեզուի պէս բան մը ունէր, դպրոցի պէս բան մը ունէր: »

Ազգային վարժարաններէն զատ աշակերտութիւնը ֆրանսական, անգլիական, գերմանական, ամերիկեան վարժարանները կ'արձանագրուի, տաճկական երկրորդական վարժարաններն ու համալսարանները կը յաճախէ:

Վանեցի Մկրտիչ վրդ. Խրիմեան, որպէս վանահայր, լրագրող, հեղինակ բազմաթիւ հայրենասիրական հատորներու, քարոզիչ, առաջնորդ, լալով կամ սաստելով, գաւառը եւ անոր ցաւերը կը ճանչցնէ Պոլսոյ աւագանիին ու կայսեր: Կ'ուզէ ուսմամբ ազգը յառաջդիմութեան մղել ու հօտը փրկել գաղթէ ու թշուառութենէ:

« Օտար սահմաններ բուսած որմնախառն ցորենէ չինուած հացը հայուն ախորժակին դառն է եւ հայրենեաց համար ուտելու սնունդ չի տար, հայ պատանին հայրենեաց հողին վրայ բուսած պատուական, անխառն, գարնանցան ցորենի հացէն կ'ուզէ, որպէսզի քաջառողջ մարմնով եւ արիական հոգով աճի եւ հայրենեաց սիրուն նուիրէ իր անձը », կը գրէ Հայոց Հայրիկը 1861-ին:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլ՝

ԱՆԳԼԻԱ. Մանչէստր՝ *Երկրագունդ:* - ԵԳԻՊՏՈՍ. Գահիրէ՝ *Արմաւենի:* - ՀՆԴԿԱՍՏԱՆ. Կալկաթա՝ *Արեւելեան Հնդկաց լրա-գիր, Եղբայրասէր, Սրբազան մտրակ:* - ՌՈՒՍԻԱ. Թիֆլիս՝ *Կռունկ Հայոց Աշխարհի, Վաճառական:* - Մոսկուա՝ *Համբաւաբեր Ռուսիոյ:* - Վաղարշապատ՝ *Արարատ:* - Ս. Պետերբուրգ՝ *Հիւսիս:* - ԹՈՒՐՔԻԱ. Արմաշ՝ *Ցոյս :* - Իզմիր՝ *Աստղ, Ափեղջիեղ, Բողբոջ, Գարուն Հայաստանի, Դիմակ, Իրաւունք, Ծաղիկ (ապա Կ. Պոլիս), Միութիւն, Մուսայք, Ցաւերժահարս:* - Կ. Պոլիս՝ *Արարատ, Երեւակ, Արեւելեան դար, Գարուն, Դիտակ, Եփրատ, Զեփիւռ Հայրենեաց, Զեփիւռ թատերական, Էրիզա, Թութակ Հայաստան աշխարհի, Թռչնիկ, Թռչնիկ պեգասեան, Ժամանակ, Միածան, Միլն Աւարայրի, Կիթառ, Հայրենիք, Հորիզոն, Զայն ընկերակցուկեան, Մամուլ, Մանրալուրք Մասիս լրագրոյ, Մանկավարժ, Մուզիկ, Մեր Ձայնի ճշմարտութեան, Վարդ, Վարդ Կեսարիոյ, Տնտես, Փող առաւօտեան, Փնջիկ, Փունջ, Քնար հայկական, Օսմանեան երաժշտութիւն, Օրագիր, Օրագիր Կ. Պոլսոյ:* - Հայատառ տաճկերէն՝ *Մանզումէի էֆքեար, Մէճմուայի ֆինուն, Մէճմուայի Գաւանիյէ, Սէտայի Հագիգաթ, Վարագայի Հավատիս, Րուզնամէյի Մէճմուայի Հավատիս:* - Հալէպ՝ *Ծոաթ:* - Մուշ՝ *Արծուիկ Տարօնոյ, Լրատար Արծուիկ Տարօնի:* - Պուրսա՝ *Խիտավէտինկեար:* - Սեբաստիա՝ *Բադ, Ձայն Սեբաստիոյ, Մամուլին զանգը, Սեւ Հողեր:*

ՖՐԱՆՍԱ. Փարիզ՝ *Մաղկաձոր, Երկշաբ., Խմբ. Խաչատուր Միսաքեան,* 17, rue du Faubourg-Montmartre: - *Փարիզ, շբ., Խմբ. Աբրահամ Մուրատեան,* 86, rue du Dragon *ապա* 26, rue Racine, *ապա* 44, rue Bonaparte, Paris: *Տպարաններ Փարիզ՝ Կարապետ Շահնազարեան,* 20, avenue du Maine. *Ճանիկ Արամեան,* 40, rue Bonaparte, Paris:

Գիրք՝

Խ. Աբովեան՝ *Նախաշաւիղ կրթութեան, Ովսաննա:* - Ամբրոսիոս Վրդ. (Ambroise Calfa, 51, rue Pigalle)՝ *Բառգիրք հայ-գաղղիերէն:* - Ճ. Արամեան՝ *Համառօտ բառարան արդիական լեզուի հայերէն-տաճկերէն, Համառօտ բառարան արդի լեզուի հայերէն-ֆրանսերէն, Դասարան հայկազն մանկանց:* - Գ. Խարիսխեան՝ *Սէր:* - Ց. Կարինեան՝ *Շուշանիկ:* - Ա. Հայկունի՝ *Էլիզա կամ Արեւելեան պատերազմի ժամանակի դէպք մը, Գերեզմանք երիտասարդաց:* - Ն. Մեզպուրեան՝ *Արաքսիա:* - Ս. Միքայէլեան՝ *Ընդարձակ թուաբանութիւն (Փարիզ, տպ. Ճ. Արամեանէ* - Մխիթար Այրիվանցի՝ *Պատմութիւն Հայոց:* - Մովսէս Կաղանկատուացի՝ *Պատմութիւն Աղուանից աշխարհի:* - Մ. Պատկանեան՝ *Քաղքենի Հանաք:* - Վարդան Բարձրաբերդցի՝ *Պատմութիւն տիեզերական:* - Թ. Տէր-Աստուածատուրեան՝ *Նկարագիր աղէտից երուսաղէմի:* - Կ. Փանոսեան՝ *Խնդիր Հայկական:*

ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆ

FETE DES BORDS DE MARNE DE NOISY-LE-GRAND

9, 10 ET 11 JUIN 1989

TROIS JOURS D'ANIMATION NON-STOP

L'Association Culturelle Arménienne de Marne-la-Vallée sera présente comme l'an passé à la Fête des Bords de Marne de Noisy-le-Grand, les 9, 10 et 11 juin 1989. Soyez comme à l'accoutumée très nombreux à rendre visite à notre stand parmi les autres Associations, sur les bords de Marne, pour prendre contact, vous informer, présenter vos suggestions, vous proposer pour animer les activités qui vous paraissent nécessaires.

Vous serez tous accueillis avec le plus grand plaisir. L'Association est pour vous et n'existe que par vous, jeunes et anciens.

SPECTACLES

Vendredi 9 juin 1989

- **21 heures**, sous le chapiteau installé sur les bords de Marne, spectacle inédit de la Compagnie Julie et Bastien, *La fin du bal*, sur le thème de 1789.

Samedi 10 juin 1989

- **à partir de 14 heures**, dans l'*Espace Vieux Métiers, Métiers d'art*, les artisans vous accueilleront sur leurs stands : démonstrations, vente d'objets artisanaux ; animation non-stop par les saltimbanques
- **14 h 30**, sous le chapiteau, nouvelle représentation de *La fin du bal*, pour les absents de la veille
- **21 heures**, Bal magnifique, animé par le groupe NIGHT ORCHESTRA, au Centre Urbain Régional (Les Arcades)
- **23 heures**, *LE FANTOME DE LA BASTILLE*, formidable spectacle pyrotechnique sur les rives du Lac du Centre Urbain Régional (Les Arcades)
- **à minuit**, reprise du bal.

Dimanche 11 juin 1989

- **à partir de 14 heures**, réouverture de l'*Espace Vieux Métiers, Métiers d'art*
- **14 heures à 19 heures**, pour les jeunes et les moins jeunes, **MEGABOUM** sous chapiteau !!!

ANIMATIONS PERMANENTES

Foire à la brocante — **Structures gonflables**
Manèges forains — **Restauration** — **Promenades à cheval**
Promenades en bateau sur la Marne — **Accueil sur les stands des Associations**

Renseignements : Service Animation, Fêtes et Cérémonies
72, rue du docteur Jean Vaquier 93160 NOISY-LE-GRAND, Téléphone : 43.03.30.71

Ces informations nous ont été communiquées par Didier MONCLIN, Directeur du Service Animation, Fêtes et Cérémonies, que nous remercions ainsi que ses collaborateurs pour leur disponibilité de tous les instants.